

3959



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան



«01» 04 2025թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 078 - 25

Նախաձեռնող՝

**Քաղաքացի Տիգրան Զիլավյան**  
Այնթապ համայնք 49 հողամաս

Գործունեությունը՝

Մասիս համայնքի Այնթապ բնակավայրի Երևան-Մեղրի մայրուղի 1-2կմ, 49 հողամաս հասցեում նախատեսվող պահեստային տնտեսության կառուցում  
Արարարի մարզ

Առդիր՝ 5 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**  
**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

ԲՓ № 078 - 25

« 01 » ապրիլ 2025թ.

**Քաղաքացի Տիգրան Զիլավյանի կողմից ներկայացված Արարատի մարզի Մասիս համայնքի Այնթապ բնակավայրի Երևան-Մեղրի մայրուղի 1-2 կմ, 49 հողամաս հասցեում նախատեսվող պահեստային տնտեսության կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝	Տիգրան Զիլավյան
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /«Բ» կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Մասիս համայնք

**Ներածական մաս.** Պահեստային տնտեսության կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Արարատի մարզի Մասիս համայնքի Այնթապ բնակավայրի Երևան-Մեղրի մայրուղի 1-2 կմ, 49 հողամաս հասցեում:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա) ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Նախատեսվող պահեստային տնտեսությունն (մարզ Արարատ, համայնք Մասիս գյուղ Այնթապ, Երևան-Մեղրի մայրուղի 1-2 կմ, 49 հողամաս) իրենից ներկայացնում է մեկ պահեստային մասնաշենք և այլ ենթառուցվածքային շինություններ: Պահեստային մասնաշենքը նախատեսված է հիմնականում մեկ հարկանի, առանց նկուղային հարկի, ներքին մասնակի միջնահարկերով տարածքներ: Շինությունը ծառայելու է որպես ապրանքների պահեստավորման, պահպանման, սորտավորման և մատակարարման ծառայություններ իրականացնելու համար: Պահեստային հարկում՝ +0.00 մ նիշում նախատեսված է գլխավոր մուտք աշխատակիցների համար, ապրանքներ ընդունելու դարպասներ, բեռնաթափման գոտի, նախասրահ, սառնարանային պահեստներ, պահեստների սպասարկման գոտի: Շինությունը նաև ունենալու է երկրորդային պահուստային ելքեր: Միջնահարկերում՝ +5.80 մ, +9.20 մ նիշերում նախատեսված է սպասարկման տարածքներ, գրասենյակային սենքեր: Հարկերը հաղորդակցվելու են ներքին աստիճան-սանդուղքով: Տանիքը նախատեսվում է երկլանջ, երեսպատված մասնակի "սենդվիչ" տիպի պանելներով, ջրահեռացումը՝ կազմակերպված արտաքին խողովակներով: Արտաքին պատերն իրականացվելու են "սենդվիչ" տիպի պանելներով, պատված բարձր որակի ճակատային ներկով: +0.000 հարկերում կան միջին համապատասխանում է պահեստային հարկի մաքուր



հատակի նիշին, որը հարավ-արևմտաին կողմից գտնվում է 1250 մմ բարձր՝ տարածքի ասֆալտապատման նիշից և 200 մմ հյուսիս-արևելյան կողմից:

Հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, պահեստարանների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողի ընդհանուր մակերես՝ 41709.8 քմ,
- շենքի արտաքին պատերով ուրվագիծ՝ 16509,55 քմ /39,58 %/,
- հարակից սառնարանային մասնաշենք՝ 1462,7 քմ /3,51 %/,
- ճանապարհ և մուտքեր՝ 21196,45 քմ /50,82 %/,
- կանաչապատ մակերես, բարեկարգում՝ 2090,0 քմ/5,01 %/,
- ենթակառուցվածքային մասնաշենքեր՝ 451 քմ /1,08 %/:

Համաձայն հաշվետվության տեղեկատվության՝ ուսումնասիրվող և հարակից տարածքներում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը: Ուսումնասիրվող տարածքի մոտակայքում չկան բնության հատուկ պահպանվող տարածքներ, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումն իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի: Տարածքում կիրականացվի սիզամարգի ցանքս, կտնկվեն ծառեր և թփեր:

Ընդհանուր կոմպլեքսի շինարարության նորմատիվ տևողությունը ծրագրվում է 720 օր՝ շինարարական աշխատանքների կատարման համար թույլատրման տրամադրման օրվանից: Բոլոր տիպի շինմոնտաժային աշխատանքները նախատեսվում է իրականացնել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները: Պահեստային շինության ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու են միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ցանցին, ջրամատակարարումը նախատեսվում է տարածքից 450 մ հեռավորությամբ անցնող D=90 մմ ջրագծից, առաջացող հոսքաջրերը կուղղորդվեն FBR (Fixed Bed Reactor) 15 խմ/օր հզորությամբ կենցաղային կեղտաջրերի մաքրման աէրացիոն կայան (մաքրված հոսքաջրերը կօգտագործվեն կանաչ տարածքների ոռոգման համար): Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովվեն՝ տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով: Բիոզուգարանի աշխատանքը հիմնված է բիոլոգիական ակտիվ հեղուկի ազդեցությամբ, որը քայքայում է թափոնները, վերացնում է միկրոբները և չեզոքացնում հոտերը: Բիոզուգարանները պայմանագրային հիմունքներով սպասարկվելու են այն ընկերության կողմից, որը մատակարարել է բիոզուգարանները: Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի, որի ստացման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ներկայացվել է մատակարար կազմակերպությանը:

Նախատեսվող գործունեության նախագիծը ենթադրում է նաև հողային աշխատանքների իրականացում: Հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 4400 խմ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող 3200 խմ ծավալով հողային զանգվածը



կտեղափոխվի Մասիսի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ կարճաժամկետ կապիտալի շինարարական հրապարակում և կոգտագործվի որպես հետլիցք: Շինարարական աշխատանքերի ընթացքում առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 4,2 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և շինարարության փուլում առաջացող 200 խմ շինարարական աղբն /ծածակագիրը՝ 9120060101004/՝ ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

**Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝**

- փորման և շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում ջրցանի իրականացում, ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում, շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով, սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական և ավտոմեքենաների անվադողերի լվացման հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանները գտնվում են շինարարական հրապարակի ցածրադիր հատվածներում, իրենցից ներկայացնում են պլաստմասե 4 հատ 25 խմ ծավալով տարողություններ, որի ծավալն ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 3000 քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կոգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ,
- շինարարական գործընթացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է այդ տարածքներում ապահովվել սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվել ժամանակակից տեխնիկական միջոցներ,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- կանաչապատման աշխատանքների համար անհրաժեշտ կլինի 200 խմ բուսահող, որի ձեռքբերումը կիրականացվի օրենքով սահմանված կարգով,
- տարածքում, ըստ մասնագետի առաջարկի նախատեսվում է տնկել գնդաձև ակացիա՝ 8 հատ, ուռնի բաբելոնական՝ 2 հատ, թույա՝ 4 հատ, գնդաձև թույա՝ 6 հատ, յասաման՝ 6 հատ, վարդեր գետնատարած՝ 4 հատ, բոցենի՝ 40 հատ, վաղենակ՝ 50 հատ, սոխածաղիկ՝ 600 հատ,
- կանաչապատ տարածքների ոռոգումը նախատեսվում է կենսաբանական մաքրման կայանից առաջացող մաքրված ջրով:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացման ուղղված հետևյալ մշտադիտարկումները.



- արտանետումների (փոշի, CO, NOx) որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրական 2 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով՝ հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:
- տվյալ և հարակից տարածքներում կենսաբազմազանության մոնիթորինգ՝ 3 ամիս մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 1440000 ՀՀ դրամ:

**Պատճառաբանական մաս.** Արարատի մարզի Մասիս համայնքի Այնթապ բնակավայրի ղեկավարի նստավայրում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային լուծումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, Արարատի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության մասնագիտացված ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակումներում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

### Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել հայտում ամրագրված բնապահպանական պահանջներին և միջոցառումներին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 15-Ն հրամանի և ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի մայիսի 6-ի «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2 – III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին» N 138 հրամանի պահանջները:



- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեքներ ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

- Շինհրապարակի արտաքին տարածքը ժամանակավոր ցանկապատել, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ:

- Շինարարության ընթացքում անհրաժեշտ է ապահովել ջրցանի պարտադիր իրականացումը:

- Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ:

### ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Տիգրան Զիլավյանի կողմից ներկայացված Արարատի մարզի Մասիս համայնքի Այնթապ բնակավայրի Երևան-Մեղրի մայրուղի 1-2կմ, 49 հողամաս հասցեում նախատեսվող պահեստային տնտեսության կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Վարդան Հարությունյան